

ԳՐԱԿԱՆ—ԲՅՈՒԱԹԱԿԱՆ

ԴԱԼԱՆԱՐԱՆԱԹԵԱՆ ԵԽ ՄԵԿԱԾԱՌԱՆՈՒԹԵԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ԾԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՎՐԱՅ.

Բացի Աւետարանի պատմոթեան ուսումից՝ հոգեօր երդը յանախ միտմամանակ ծառայում է ժողովրդին նաև զաւանաբանական ուսում տալու Այսպիսի շարականների ամենապարզ և հին տեսակն իր մէջ ամփոփում է սովորաբար Քրիստոս Աստուծու բնորդանուր ստորոգելինները Յետադայ դարերում սակայն մուտք չեն զործում և այնպիսի գաւանաբանական խնդիրներ, որոնք եկեղեցու մէջ վէճի ու պառակտման առարկայ են դարձած Այս վերջին տեսակի շարականները, բնականօրէն, առանձնապէս աչքի են ընկերում իրենց սառն ու վերացուկան բնաւորութեամբ Առնենք իրեն որինակ Հոգեգալատեան կանոնները, որոնք եօթն են Այս շարականների մէջ ընդհանրապէս Աւետարանի յարասութեամբ Ա. Հոգու գալութեան պատմութիւնն է լինում, բայց յաճախ յիշաւակութիւն է լինում նաև զաւանաբանական խնդիրների. «Օրհնութիւն ի բարձունք նլողին ի Հօրէ հոգւոյն որբաք. «զոր քարոզեցին համազոյականք. «Երրորդութիւն անբաժանելիք. «Զերկումն Հոգոյն տօնելը վերաբերեալ, Ասսուած խոսափանիմբ նորոգող և կենդանարք. «Խոստովանիմը ասսուած զՀոգին սուրբ բղխումն և լրացուցիչ զամնայն. «Զերկուն ի Հօրէ, գեւակից որդույ սուրբ զՀոգին օրհնեցելք. «Մեծացուցանելույ զեւողն ի Հօրէ. «Որ յամնայնի ևս ասսուածութիւնն. «Որ հարաշարժ ի յաղըերէն յառաջ բղխուալ անհատաբար ի յորդույ աիրապէս ո. Հոդին... Որ յանսկիզբն և ի մրշտ ի յէն, նոյնագոյ բնաւորութեամբ, անօրից բաժանմամբ ի յորդույ արարչակից ո. Հոդին են Անա թէ բնչպիսի գաւանաբանական խնդիրներ տեղի ունին Հոգեգալատեան առաջին օրուայ կանոնի մէջ, որ շարակնոցների աւանդութեամբ դեռ հին են համարւում, վերացրուելով Մովսէս Քերթովին կամ Անանիա Նիրակացուն Յաջորդ վեց օրերի կանոնները, որ Շարակնոցները ընծայում են Ներսէս Շնորհալուն,—ումանք սակայն վեցերորդ և եօթներորդ օրերի կաւոնները Ներսէս Լամբրանցուն, 1) —աւելի ևս զրադուում են այսպիսի խնդիրներով.

1) Ճար. էջմ. 1861 եր. Ա. գ. — Ա. վ. Ամառանի, չ. և Ա. Պար. Ճար. եր. 105 հա.

«Նոյն եւ նման Հօր եւ Որդւոյ,

Հոգիդ անեղ եւ համազոյ.

Բղխումն Հօր անքննաբար,

Առող յորդւոյ անմառաբար»***

«Որ բոլորից ես պատճառ էից անպատճառից և որոց պատճառաւ Հայր անձին և անսկիզբն, Որդւոյ պատճառ անժամանակ ծննդեամբ և Հոգւոյ բղխման անքննաբար»***

Եւ այսպէս լի ու լի են զաւանաբանական խնդիրներով այս եօթն օրուայ կանոնների բարոր շարականները, որոնցից վերջինը, եօթներորդ օրուայ կանոնի «Համբարձին», ամբողջ ութ տուն, ոչ մի որ և է գէպքի պատմութիւն ունի իր մէջ, ոչ էլ օրհնութիւն կամ փառաբանութիւն, այլ ձայրէ ձայր լոկ սառն դատողութիւն է ա. Հոգու մասին. «Հոգին սուրբ էր միշտ և է և եղիցի, ոչ սկսեալ և ոչ զաղարեալ, այլ միշտ ընդ Հօր և Որդւոյ կարգեալ թուեալ և միշտ օրհնեալ է ի յաւիտեանց և այսպէս մինչև վերջը. Դա արդէն բանաստեղծութիւն չէ, այլ լոկ Հօր ու ցամաք զաւանաբանութիւն:

Արդարե շատ չեն այն երգերը, որոնք ամբողջապէս յատուկ դաւանաբանութեան համար յօրինուած լինին. բայց չափազանց մեծ է այն երգերի թիւը, որոնց զրեթէ ամբողջ նիւթը—փառաբանութեան կամ օրհնութեան մասը հանած—կազմուած է լոկ դաւանաբանութիւնից, և կամ որոնց այս կամ այն տողի մէջ զիտաւորեալ կերպով սահեցրած է որ և է զաւանութիւն. Օրինակ՝ Ծնընդեան «Խորհուրդ մեծ» նշանաւոր օրհնութեան վերջին տան մէջ, թւում է թէ բանաստեղծը շատ բնականօրէն, անդիտակցարար գրել է «ոչ մեկնելով ի Հօրէ» բառերը.

Անբաւելին երկնի եւ երկբի

Ե խանձարուրս պատեցաւ,

Ոչ մենելով է Հօրէ՝

Ե սուրբ այրին բաղմեցաւ.

Բայց դա յատուկ զիտաւորութեամբ արուած բան է. և դաւանաբանութեան այդ խնդիրը շատ է զրազեցրել մեր Ծննդեան երդիչներին.

Մընար ի կուտէ անմառ միութիւն,

Անբաժանելի եւ միշտ զոլով,

Ոչ մենեց-է է հոյք-ի-ու շոշոյ.

Զրիդ օրհնեամբ Աստուած մարցն մերոց (եր. 24):

Այսօր բանն է Հօրեւ ուշինելու
և անձառելի խորհրդավ,
և մեւն կուսական որովայնի.
Տեղինաքար յերկրի երեւալ (եր. 26):
Որ ի խանձարուրու պատեցար անեղանելիդ
Աւ մէնէւ-ը յանաշնին գուշաց Հօր:
Խակալից տուրը Հողւայր... (եր. 59):
Մար ի կուտէ անձառելի Յանիզ,
և Հօրեւ ու Մէնէւ-ը... (եր. 47):
Անեղանելիդ Աստուած Յանիզ.
Առաքելութ է Հօրեւ,
Ընդ ժամանակաւ լինիլ ճամեցար,
և մարմնացար ի առոր կուտէն՝
Աստուած եւ մարդ յայտնեալ... (եր. 54):

Ծննդեան երգերն, ի միջի այլոց, առանձնապէս լի են և ուրիշ այսպիսի դաւանաբանական տողերով ու տնկրով:

* *

Այս դաւանաբանական շարականներին իրենց ընաւորութեամբ մօտենում են այն երգերը, որոնց յօրինողը, ուսուցանելու նպատակով, պարզապէս յիշեցնում է Քրիստոսի աստուածային ընդհանուր յատկութիւնները, առանց որ և զ դաւանաբանական խնդրի յատկութիւնն ցոյց տալու և այս լինում է յաճախ առանձին արուեստով Բանաստեղծն ամսում է Քրիստոսի մի աստուածային յատկութիւն, ապա պատմում է Յիսուսի կեանքից մի արարք իրք հետեւոնք նրա յիշուած աստուածային յատկութեան: Այսպէս օրինակ Ղազարոս յարութեան կանոնի մէջ, որ ընծայում է Ս. Սահակ Պարթևին, Քրիստոս ներկայանում է իրք կենդանաբար, աղքարք կենաց և անմահութեան: Նրա դիմացն է մահ, զերեզման, և նա իր ամենազօր հրամանով օարսացնում է գժոխքը և մեռելին յարութիւն տալիս.

Կէնդ-ն-ը-ն-ը բ-ը-ն-ը Քրիստոս
և Յիթակիրա եկաւորեալ ալար,
Շարիկա-մին Վաղարս
Պո-չի-ւ-է ո-չի-ն-ո-ն-ո-ն-ի-ւ-ն (եր. 225):
Ա-չ-ը-ի-ւ- ո-չ-ո-ն-ո-ն-ի-ւ-ն բդիստի ի Յիթակիր
Կէն-չ-չ-չ-ւ-ն դ'ազարոս ի Թաղմանէ (եր. 227):
Աղքիր կենաց եւ անմահութեան,
Աստուածային մայիսի դողացոցեր զման
Եւ նորսդեցեր դչորերօրեայ մտեալի (եր. 224):

Ամենասպավորական ձեն է, սակայն, աստուածային և մարդկային յատկութիւնների հակաղրութիւնը Առնենք զրա համար Մեծի շաբաթի թաղման կանոնը:

Այս կանոնի «օրհնութիւնը» կազմուած է երեք երգից, իւրաքանչիւրն երեք անից: Առաջին երգը, որը «փոր սարօք» ընծայում են շարակինոցները և Առակ Պարթեին, ինչպէս երեսում է, յօրինուած է տօնական հանդէսի, թափորի համար, զա սկզբից մինչև մի այնպիսի վայրինամուր յատկութիւնները և ապա յաջորդ տողի մէջ ճարտարաթեամբ յիշեցնում է նրա թաղման պատմութիւնից մի այնպիսի վայրինամուր որ առաջին տողերի մէջ յիշուած աստուածային յատկութեան հետ մեծ հակաղրութիւն է կազմում: որով և այս բանաստեղծութիւնը զարնում է լողի ոչ այնքան զգայարաններին, որքան մարդին: Այս ձեռվ սակայն կարողանում է երդին արտայայել իր ոքանչացումը և մի բաւական վիճ ու վսեմ բանաստեղծութիւն յօրինել:

Պարզեւատուն ամենեցուն

Այսօր խնդրի պարզեւս ի Պիգատոսէ:

Եւ արկողն զլոյս որպէս զօթոց՝

Հաւանի պատիլ ի Յովուչփայ:

Երկրորդ և երրորդ «օրհնութիւնների» մէջ, ինչպէս և այս կանոնի այս ամբողջ շարքի մէջ, սոյնպիսի հակաղրութիւններով, երբեմն նոյնութեան հասնող կրկնութիւններով, շարունակ յեղյեղում են նոյն զաղափարներն ու նոյն դէպքերը:

Այս կրկնութիւնները, որ ձանձրալի միատեսակութիւն են մտցնում ոչ միայն այս, այլ և ուրիշ կանոնների մէջ, մեր այժմեան ճաշակով բանաստեղծութեան պակասութիւնն են կազմում: բայց մի ժամանակ զրանք համարուել են հոգեսոր երգի արժանիքը: կըրկնութիւնը, եթէ ամբողջ կանոնի յօրինողը մի բանաստեղծ է, առաջանում է մի զլուաւոր պատճառից: ինչքան էլ բանաստեղծն ընդունակ լինի, նա չի կարող ութ ինը երգ զրել նոյն նիւթի մասին և ամեն անդամ նոր զաղափարներ ու նոր ձեեր ստեղծել: նա ստիպուած է ճապազել իր ասելիքը և մի երկար ու ձիգ կանոնի մէջ նոյն միտքը նոյն ձեռվ զարգացնել շարունակ: Իսկ եթէ կանոնի տարբեր մասերը տարբեր բանաստեղծների զրած են, այդ ժամանակ կրկնութիւնը ծագում է այն ընդհանուր երեսյթից, որ գտնում ենք միշտ բոլոր զրական տեսակների մէջ: Մոքի և

ձեի սկզբնական ճարտար գիւտերը մի հաստատուն կերպարանք են տալիս բանաստեղծութեան որոշ տեսակի, ստեղծուում է որոշ կադապար, որից դուրս գալ չեն կարողանում յաջորդ բանաստեղծները։ Այս դէպքում նմանողութիւնն անխուսափելի է։ Այսպէս մեր միջնադարեան աշխարհիկ երգիչները նման և նոյն ձեերով գովում են գնդեցկութիւնը, վարդ ու գարունը կրօնական օրհներգութեան մէջ սակայն այս նմանողութիւնը բառացի երկնութեան է համուռ, որովհետեւ ինչպէս հաւատքի համար որոշ, հաստատուն դաւանանքներ են ստեղծւուի, նոյնպէս այդ արտայայտելու համար որոշ բառեր ու բանաձեեր են առաջ դալիս Եւ այս երկուոր, եկեղեցու ընդունած դաւանանքն ու նրա արտայայտութեան պատրաստի կանխաւաւան ձեր, պարտաւոր էք բանեցնել ամեն երգիչ Ուսափի և նոյն նիւթի մասին զրող բանաստեղծները բնականարար յաճախ նոյն դաւանաբանական խնդիրներն են շօչափում, նոյն ստորոգելիներն են ասում նման հակադրութիւններով, այսինքն բաղդատութիւնն են զնում Քրիստոսի աստուածային և մարդկային յատկանիների մէջ Եւ այս հակադրութիւնները կազմում են մեր տէրունական տօների շարականներից շատի էութիւնը։ որովհետեւ ձննդեան տօն լինի թէ թաղման, յարութեան տօն լինի թէ համբարձման, միշտ նոյն մարդեղութեան անօրինական խորհուրդն է, որով Քրիստոս և Աստուած և մարդ է։

Մանուկ անժամանակ ի Հօրէ,
Եւ ժամանակաւ դոյացեալ.
Նսեալ լինի Աստուած և մարդ (եր. 27):

Այսպիսի հակադրութիւնների մէջ բանաստեղծների անձնական գիւտը միայն այն է, թէ որ աստուածային ստորոգելին, որ ընդունուած է դաւանաբանութեան մէջ կամ յայտնուած է։ Ա. զրբքում, Քրիստոսի որ մարդկային յատկութեան կամ արարքի հնատ կը կապեն։ Եթէ բանաստեղծ չնորհքով է, այս տեսակէտից հարկաւ, մի նոր բան անում է, թէ չէ՝ նա կրկնում է իր նմանողութեան ազրիւրը։ Դրա մի լաւ օրինակն է Մեծի շարաթու նոյն թաղման կանոնը։ Այս տեղ ամրողջ կանոնի մէջ մի բանի անդամ պատմում է նոյն բանը. թէ ինչպէս Յովսէփը Քրիստոսի մարմինը խնդրում է Պիդատափց, սրատանում է, զնում նոր գերեզմանի մէջ, թէ ինչպէս նրա զերևումանը կնքում են, և զինուորները պահպատում։ Այս պատմութիւնն ամրողջ կայ արդէն առաջին «օրհնութեան» մէջ՝ «Պարզեատուն ամեննեցուն», որ հին երդ է, և ինչպէս սատոր, վերադրում է Ա. Ատակ Պարթեին նոյնը կրկնում է և միւս երկու «օրհնութիւնների» մէջ, որ ն. Շնորհալուն են լիւ-

բազրում, և կանոնի միւս մասերի մէջ, որ գարձեալ Սահակ Պարթեին ևն վերազրում, բայց տարրեր ձեւերով Դնենք դէմ ու զէմ այդ երգերի նոյն պատմութիւնը կրկնող տողերը:

I.

| | |
|------------|--|
| 1-ին օրհն. | Պ-րէ Հ-ո-ռ-ն ամենեցոն Այսօր Է-ն-դ-ր-է ո-ր-ք-Լ-ս ի Պիղատոսէ: |
| 2-րդ օրհն. | Ա-ն-դ-ն-ին յ-ո-ւ-ի-ո-ն-ի Ֆրիատոս Այսօր Է-ն-դ-ր-է ո-ր-ք-է-ս մ-ե-ւ-է-ս ի Պիղատոսէ: |
| Ուշա. | Որ բաշխող եւ բարութեանց Եւ ո-ր-ք-Լ-ս-ս աբարածոց բոց. Այսօր համեցար խնդրի Ի պ-րէ Լ-է յ-ո-ն ի Պիղատոսէ*** |
| Տեղ. | Յովսէփ ճշմարիս եւ արդար Հայեր ի Պիղատոսէ Զհասարակաց ո-ր-ք-Լ-ս-ս-ս. Որ տուաւ մեղ գանձ անկողոպաելի: |

Այս չորս երգերից առաջինի և վերջին երկուսի մէջ նոյն գաղափարը, նոյն հակադրութեամբ դրուած է Պիղատոսից Յիսուսի մարմինը խնդրելու պատմութեան մէջ. եթէ ճիշտ է շարակնոցների աւանդութիւնը, թէ այդ երգերի հեղինակը մէկ է, ուրեմն բանասանզծը կանոնի շարքերի մէջ փոքր ինչ տարրեր ձեւերով կրկնել է իր մի անդամ մտածածը: Երկրորդ օրհնութեան մէջ սակայն Ներսէս Շնորհալին ոչ թէ «պարզեատուի» իրրե պարզն խնդրուելու հակադրութիւնն է առնում, այլ «յաւիտենական կենդանին» որպէս մեռեալ խնդրուելու. բայց այս հակադրութիւնն էլ անպայման ծնուած է Սահակ Պարթեին վերազրուած երգի երկրորդ տան առաջին մասից:

II.

| | |
|------------|---|
| 1-ին օրհն. | Եւ ո-ր-ք-Ն- չ-լ-յ-ս ո-ր-ք-է-ս շ-օ-ն-ց Հաւանի պատիլ ի Յովսէփայ: |
| 2-րդ օրհն. | Եւ մ-ե-ր-է-ս-ն-ե-ա-ն ։-։-։-յ-յ-ն Ա-դ-։-։-յ-յ Յանձն առնու պատիլ ի Յովսէփայ: |
| Ուշա. | Որ զանճառ չ-լ-յ-ս փառաց Իբրև շ-օ-ն-ց ը-լ-յ-ս ո-ր-ք-է-ս, |

Այսօր անմատ խոնարհութեամբ
Պատեցար ի Յովկէփայ...

ՏԵՐ. Պատեհալ սուրբ կրտաւոր
Զմարդինն տէրունական.

Զ-ՇԻ-Ն ՇԱՀՄ- ԴՐԱՀ- Հ-Բ-Հ-Շ.
Որ զղցոյց մնդ դգիստ անկողոպտելի:

Այսաւել ևս նոյնն Անք անսուռմ, ինչ որ առաջին դէպքում,
առաջին և վերջին երկու երդերի մէջ ըանասանեղծը նոյնը կրկնում
է. մինչդեռ Ծնորհալին պատանուելու դէմ դնում է ուրիշ աստուա-
ծային յատկութիւն:

III.

1-ՌԱ ԺՐԱ. Կենզանատուն ամենեցուն
Այսօր զնի ի նոր զերեզմանի...
Արարածոց վրկութիւն Քրիստոս
Այսօր եղաւ ի նորափոր զիմու:

2-ՌՐ ԺՐԱ. Անմահութեանց տուող Քրիստոս
Այսօր ի հող մահու խոնարհեցաւ.
Եւ բնակեալն ի լոյս անմատոյց
Թաղեցաւ մարմնով ի սիրտ երկրի.
Արեգակն արդարութեան Քրիստոս
Այսօր եղաւ ի զրի սոսւնքականի.
Եր փառացըն հօր հանագայթ
Ծածկեցաւ վիմով ի մէջ երկրի:

3-ՌՐ ԺՐԱ. Կուսածին մարմնով Քրիստոս
Այսօր զընի ի կոյս դերեզմանի:
Զօր ոչ բնութիւնը արարածոց՝ զաստուած՝ տանիւը՝
Մահուամբ սահմանեալ դնի ի նոր զերեզմանի...

ՏԵՐ. Եղաւ ի նորափոր ի զիմու...
Որ զնախասանեղծն կենդանացոյց:

Այսողէս և շաբունակութեան մէջ:

Ես այս հակաղութիւնների մասին բացատրութիւններ տալն
աւելորդ եմ համարում. միայն այսքանը պիտի դիտել առամ, որ
Ծնորհալուն ընծայուած 2-րդ և 3-րդ «օրհնութիւնների» («կենա-
դանին յաւիտենից» և «կուսածին մարմնով») հատուածներն իրար
չեն հանդիպում. III հատուածի մէջ այդ երկուուր իրար հետ եմ
դրել, բայց դրանք նոյն դէմքի ընդարձակումն են մանրամասնու-
նութիւններով, և մէկը միւսի ոչ թէ կրկնութիւն է, այլ շաբու-

նակութիւն, «կենդանին յաւիտնից» օրհնութեան մէջ բանառ-
տեղծը պատմում է զործողութիւն կատարելը, մինչև գերեզմանի
զուոր վէմով ծածկելը, իսկ «կուռածին մարմնավ» օրհնութեան
մէջ առնեռում է նախ՝ պատմած զործողութեան հետեանք վիճակը,
այն է՝ Քրիստոսի դրուած լինելը գերեզմանի մէջ, և ապա շարու-
նակում է պատմոյ զործողութիւնը, այնպէս որ այս երկու «օրհ-
նութիւնը» կազմում են մի ամբողջութիւն, մի երգ, բաժանուած
երկու մասին Այս հանգամանքը իր կողմից վկայում է, թէ մի
բանաստեղծ է այս երկու «օրհնութեան» հեղինակը, որ նմանելով
Սահակ Պարթևին վերագրուած երգին՝ վեց տուն երգի մէջ նոցն
կարդավ նորից երգել է Քրիստոսի թաղման պատմութիւնը, Բայց
որովհետեւ այդ պատմութիւնը հինգ վայրկեան ունի, ուստի «Պար-
գևատուն ամենեցուն» երեք տուն երգի մէջ, քանի որ ամեն տան
մէջ երկու վայրկեան է առնեռում, բանաստեղծը մի անդամ միայն
նոյն բանը կրկնում է, «Այսօր դնի ի նոր զերեզմանի», «Այսօր եղաւ
ի նորափոր վիմի», իսկ Շնորհալին իր վեց տուն երգի մէջ մնած
ձարաարութեամբ, թերես ազդուած «Պարգևատուն ամենեցուն»
երգի այդ կրկնութիւնից, մտածում է զերեզմանի մէջ զրուելու
նոր մանրամասնութիւններ, որոնք բնականօրէն յաջորդում են
իրար, այն է՝ մարմինը խոնարհեցնում են դէպի մահու հողը,
մտցնում են երկրի սիրտը (այրը), զնում մօւթ փսսի մէջ և դուռը
քարով ծածկում, և նոր թէ՝ արգէն կուսածին մարմնով Քրիստոսը
դրուած է կոյս զերեզմանի մէջ և կնքում է մատանիով։ Սրանից
յետոյ, դարձեալ ներչնչուած նոյն կանոնի «ողորմեայի» այս խօս-
քերից՝ «ի զերեզմանի տքնեալ», մի նոր վիճակ է պատկերացնում»

Արթուն բնութեամբ արարիցն ամենեցուն
Այսօր ննջէ, ի մէջ մահացելոց

Սպա ոչ թէ զինուորների պահպանութեամբ է վերջացնում
ամբողջը, ինչպէս ո. Սահակին վերագրուած երգի մէջ է, այլ եր-
կու նոր վայրկեան ես աւելացնելով՝

Յնծութիւն արարածոց Քրիստոս
Այսօր արտասուի որպէս մնուեալ ի տրտմազգեցիցն
Եւ բարումն անմանութեան
Խնկի ի զգաստիցն իւղարերից,

Թէ երբ է մեր հոգեոր երգի մէջ մտել Քրիստոսի աստուա-
ծային և մարդկային յատկութիւններից այսպիսի հակազրութիւն-
ներ կազմելու արուեստը, այդ յայտնի չէ։ Դա յատուկ հայոց հո-
գեոր երգի մի ձև չէ, և իր բնաւորութեանը այնպիսի է, որ ա-

մինավաղ ժամանակներում ևս կարող էր գործազրուել եկեղեցական բանաստեղծութեան մէջ: Մեր շարակնոցների աւանդութեամբ Ա. Սահակ Պարթեին վերագրուած երգերի մէջ արդէն գտնում ենք այդ ձևը չափազանց գործածուած: բայց զիս ճշտուած չէ այդ աւանդութիւնը, և մենք չգիտենք, թէ արդեօք իրօք Ա. Սահակ Պարթեր հոգեոր երգերի հեղինակ է: թէ ոչ Յամենայն դէպս այդ եղանակը, որ բաւական սիրուած է մեր տէրունական տօների շարականների մէջ,—առանձնապէս Ծննդեան, Տեսնընդառաջի, Ծաղկազարդի ու Աւագ շարաթի կանոնների մէջ, հին է երեսում: Ա. Սահակին վերագրուած մի հարց ու գործատան մէջ*), որի փոխանակ յետադայում անցել է Ներսէս Շնորհալու «Որ ի քրօքական աթոռ» հարցը, արդէն դործադրուած է այդ եղանակը. իսկ այդ խափանուած հարցը, եթէ Ա. Սահակի գործ չէ, անպայման չին է, քանի որ շատ պարզ յօրինուածք ունի և առաջին տունը նոյն իսկ յարասութիւն է Ա. Գրքի օրհնութեան: Նրա մէջ գտնում ենք հետեւելք:

Որ յաթոռս քերովրէից
Հանգչի Քրիստոս Աստուած,
Այսուր ի նոր յաւանակի
Նստիլ հանեցաւ:

Արդ այս մի և նոյնը կրկնուած գտնում ենք Ծաղկազարդի կանոնի միւս մասերի ևս, ինչպէս և Շնորհալու գրած նոր հարցի մէջ:

1. Ա. Ժ. Հ.

Որ վերօքնիս յաթոռս քերովրէից,
Ե վերայ նստիլ յաւանակի հանեցար...

2. Ա. Ժ. Հ.

Այսօր զանըսկիզբն Բանն,
Որ յաթոռ փառաց ընդ Հօր,
Ցերկը երեւեալ տեսար...
Այսօր յաւանակ քրօք...

Հ. Հ. Հ.

Որ ի քրօքական աթոռ
Ընդ Հօր նստէիր բանդ աստուած,
Այսօր խոնարհութեամբ
Նստար մարմնով նոր յաւանակի...

Մէշ.

Քանզի Քրիստոս,
Որ էնն ի յաթոռ փառաց,

*.) Ա. վ. Ամատունի, Հ. եւ Ն. Պար. Շար. եր. 88. «Որ զերիս ժանկունս ի հնոցին ապրեցուցեր, աւրենիալ յաւիտեան»:

| | |
|------|--|
| | Այսօր մասնէ ի բեղ, Նստեալ ի վերայ յաւանուկի նորոյ: |
| ՏԵՐ. | Զբիստոս Ռոդուորն. Որ էն ի յաթոռ փառաց, Տհաք ի յերկրի, Նստեալ ի նոր յաւանուկի: |
| Հ-Հ- | Անսկիպըն բանըն Հօր. Որ ի վերայ բնորէիցն ճանդի, Այսօր ի վերայ յաւանուկի նորոյ նստեալ . . . |
| Հ-Հ- | Զոր սերովրէրն ծածկաբար բնդունիլ ոչ բաւելն, Ի վերայ յաւանուկի նորոյ նստեալ Բարերանեցաւ ի տղայց: |

Ես գիդմամբ օրինակներ շատացրի՝ ցոյց տալու համար, թէ ինչպէս առաջին բանաստեղծին, որ գժրախտ միտքն է ունեցել՝ Աստուծոյ քերովքական փառաց աթոռի հետ համեմատելու. այն աւանակը, որի վերայ նստում է Յիսուս. հետեւում են յաջորդները, կամ գուցէ և ինքը նոյն բանաստեղծը կանանի միւս մասերի մէջ չարունակ կրկնում է մի և նոյնը. Աւելացրէք վրան, որ առանց համեմատութեան էլ յաճախ կրկնուում է՝ առհա թագաւոր քո գայ՝ նստեալ յաւանակի նորոյ», կամ «այսօր ընդ հրակերպեան գասուցըն օրինաբանէին ծերքն ոստովք և տղայքն արմաւենեօք»... Եւ մենք ունենում ենք Մազկազարդի և երկրորդ, Ողոգումնան ծաղկազարդի կանոնների 13, պարականոն շարականների հետ՝ 17 երգերը:

Բայց այդ բազգատութիւնը միայն Մազկազարդի կանոնով չի վերջանում, նոյնը տարրեր ձևերով յեղյեղւում է և միւս կանոնների մէջ, ինչպէս Մեծի երեքաբաթի տէրյ. «Որ նստիս ի քերօրէս Աստուած բանդ, այսօր վասն մեր խոնարհութեամբ նստար ի կրինն Զիթենեաց». Մեծի չորեքչարթի օրին. «Որ յաթոռ փառաց բազմեալ ընդ Հօր անակդրմակից բանդ, այսօր բազմել ընդ հողեղէնան յանձըն առերք, Մեծի հինգչարաթի օրն». «Որոյ աթոռ քերօրէ, ի վերնստունն բազմեցար» ելն. Սյադէս և ծննդեան կանոնների մէջ «Որ յանձառելի աթոռ ընդ հօր փառակից բանն ի յերկրի երեսեցաւ». (եր. 28). «Որ յանմատոյց լուսոյ ծածկեալ ընդ Հօր և սուրբ Հոգւոյն ի քրօրէականն հանգչէիր յաթոռ, այսօր խանձարուրօք պատեցար և յանբանից մսուր եղար» (եր. 32). «Որ ի քրօրէական աթոռ նստիս...» (եր. 31). «Որ յանարուեստ աթոռ նստիս և ընդ Հօր և յեռթեան, յանբանից մսուր եղար» (եր. 35). «Որ ի հրեղէն աթոռ ևս բնակեալ»... (եր. 37). Տեառնընդառաջի. «Որ յանարուեստ աթոռ նստիս բարերանեալդ ի հրեշտակաց, այսօր ի Սի-

մէօնի բանալով ի գիրկս... (եր. 66). «Աթոս քրօքական երևալ
այսօր Սիմէօնը... (եր. 69) ելն:

Այսպիսի բաղդատութիւնների ահամկների թիւր բաւական
չատ է. բայց ինչքան էլ դրանք բազմազան լինին, որովհետեւ նոյնը
յաճախ կրկնուում ոչ միայն նոյն, այլ և տարբեր կանոնների մէջ,
ուստի և մեր հոգնոր երդը տաղակալի միակերպութիւն, է սատ-
հուում: Բանաստեղծների երևակայութիւնն աղատ չի գործում, նրանք
կաշկանդուած են մեռում մի անդամ արդէն ստեղծուած ձեր մէջ
և մեքենայօրէն կրկնելով նոյնը՝ յօրինում են իրենց նոր երգերը:
Դրա պատճառն այն է, ինչ որ վերուում զրինք, եկեղեցու մէջ Քրիս-
տոսի համար հաստատուն դաւանութիւնն է ստեղծուում. որոշուում են
Քրիստոսի աստուածային ստորոդելիները, լինին եկեղեցու հայրերի
թէ մեկնարանների ձեռով:



Բացի դաւանաբանական ուսումից՝ շարականների նիւթի և
պատեստի վրայ մնծապէս ազգել է նաև մեկնաբանութիւնը, որով ս-
Գրքի պարզ իրողութիւններին ու իրերին տրուած են խորհրդաւոր,
սիմբոլիկ նշանակութիւնն, և Աւետարանի այս կամ այն դէպքի հետ
կամուած է Հին Կատակարանի որ և է դէպքը Այս սքոլաստիկական
բացարութիւնները զարգանուում էին մեկնութիւնների ու ձառների
մէջ. բայց որոշ մեկնութիւններ և նմանութիւններ ընդհանրացած
լինելով՝ ամենքից ընդունելի էին դասնուում, և հոգեոր բանաս-
տեղծը պարտաւոր էր հաշուի առնել այդ: Ուստի և մեր հոգեոր
երգը իր ձեռք ու պատկերներով յաճախ կախուած է այդ սքոլաս-
տիկական մեկնութիւններից:

Այս տեսակի շարականների գեղեցիկ օրինակ են ս. Խաչը
կանոնները, որոնցից Վերացման ս. Խաչինը վերագրուում է կաթու-
զիկոս Սահակ Զորափորեցուն: Դրանց մէջ խաչի բոլոր նկարագիրն
ու համեմատութիւններն առնուած են մեկնաբանութիւնից. այս
դէպքուում, օրինակ, այդ երգերն առանձին տնիերի բովանդակու-
թեամբ և պատկերներով չեն տարրերուում Դաւիթ Անյաղթի «Եւր-
րոզեանից ի ս. Խաչն»*):

Ս. Խաչը յաճախ երգւուում է իրեն «Նշան յաղթութեան» թըշ-
նամինների գէմ, «Պաւազան զօրութեան» հաւատացեալների համար՝
երկրի վերայ երենցած Բատ ինքեան այս նմանութիւնն անյաջող
չէ. բայց դա ոչ թէ բանաստեղծի մաքի ու երևակայութեան ձնունդ

*.) Կորիւն վարդապետի, Մամբրէ Վերածնողի և Գաւթի Անյաղթի
Մատենադրութիւնը, Վենետիկ 1835. եր. 403 հոն.

է, այլ լոկ նրբամիտ մեկնաբանիւ խաչի այդ սիմբոլիկ նշանակութիւնն իրքի գորութեան գաւաղան՝ ծագել է Մովսէս Մարդարէի գաւաղանի մեկնութիւնից իրքի խաչի նշանակ, որ և գտնում ենք ոչ միայն Դաւիթի Անյաղթի, այլ նոյն իրկ Շարականի հետեւալ զծուծ տան մէջ.

Գաւաղանամիւ երեւեալ եղիալտական աղղին.
Յուցանելով զգօրութիւն սրբոյ խաչին,
Յափշտակելով զգաւաղանան դիւթական.
Որ հեւացայց մնգ սովոր մտանել
Ընդ զուսն անհղաշէն զբախտին տեառն (եր. 504),

Մովսէսի գաւաղանի այս մեկնութիւնից է առաջանում, օրինակ, և հետեւեալ անյստակ փոխարերութիւնը, որի մէջ ակնարկւում է կարմիր ծովին ու Փարաւոնին. «Որ զանգունդս մեղաց ծովուն բաժանեցեր և զբանաւորն ծածկեցեր խորօք յաւիտենական հրով, հաներ զժողովուրդ քո ի բնակութիւնս երկնից անկեալ զօրացն...» (եր. 504):

Այսպէս ո. Խաչն է և «մորենին վառեալ, որ ոչ այրիւր», շարականների մէջ սակայն ոչ միայն Խաչը, այլ և Աստուածածինը նոյնպէս կոչւում է «մորենի անկիզելիք», և այս երկուուի համար ևս Մովսէսի մորենու նմանութիւնը ծագում է մեկնաբանից: «Օրհնեալ ես, փայտ սուրբ, որ վերապոյն մորենոյն առ կոյսն բնաւորեցար սրանչելիօք», զրում է Դաւիթ Անյաղթը (եր. 115) և ապա աշխատում է ապացուցանել, որ խաչի մորենին «բարձրագոյն զոյ հրաշից». Մովսէսի մորենու չվառուիլը թերեւս այնքան զարմանալի չէ, որովհետեւ «դալարագոյն զօրութիւն թփոյն առ հուր աննիւթ տեսականութեան՝ թերեւս խորշի ի զարմանց», մինչդեռ խաչի փայտը «յոյժ՝ զիւրակէզ և ցամաք» լինելով հանդերձ «պահեցաւ անկէզ», նայելով որ նրա վերայ էր աստուածային «հուրը» (Քրիստոս) և նրանից «իրքի եռանդնուտ յիմանալի քրայէ» արտաշիկագոյն առու հրախառն սուրբ արեանն հոսմամբ ի վերայ իջեալ:

Մեկնաբանի գրածի այս վերջին մասն իմանալուց յետոյ միայն հասկանալի կը լինի շարականի հետեւեալ տունը, «Որ զգիր պարտեաց կողածնին» (Եւայի մեղքը) լուսաց ճրանու վտակօրն ի արկախոց կողէն բզիսեալ, զօր արբոյց տիեզերաց» (եր. 502):

Դաւիթ անյաղթը Մարդարէից մէջ մի տեղ յիշուած էմանուէլի կառը, որ և «քառաղէմ կապը», այլ և «քաղմակն», մեկնաբանում է խաչի համար, և ահա բանաստեղծը երգում է,

Անապատումն կառը.
Անքննելի խորհրդոյն ընդունաբան,
Ո՞վ սուրբ քառամեծ,
Ե սաւառնաթելից յարանուելոց որովմէից
Անտեսաբար անիւ պատուեալ (498)

Առնենք հետեւալը. «Քանզի անժմանցաք կենաց փայտիւ ի ճաշակմանէ մահաբեր պաղոյն, որ կանգնեցաւ քառակերպն ի միջակեն՝ դիտելով ընդ հարաւ. . . Այս առնը հասկանալու համար պէտք է իմանալ, որ մեկնաբանները երաւազէմը համարել են նրկրիս միջակը, այսինքն մէջտեղը, պորտը, այնուհետև պէտք է իմանալ, որ Յօրի գրքի (լ.թ. 26) հետեւալ խօսքը՝ «Եթէ ի քումմէ իմաստութենէ եկաց բազէ տարածեալ զի՞հս, անչարժ զիակելով ընդ հարաւ. . . մեկնել են իրքն Քրիստոսի Խաչելութեան նշան, թեատարած բազէն իրքն Քրիստոսի խաչափայտը. Նարեկացին նոյն իսկ անշարժ բառը բացայայտում է իրքն կամաւ գալն ի խաչ, իսկ ընդ հարաւ դիտելն իրը նշանակում է սասանել ի գժոխականն, զի արձակեսցեն զարդելեալ ողիսն»:

Այսպէս և ո. Խաչը, թէ ըստ մեկնաբանին և թէ ըստ երգչին, մարդարեի տեսած հօթնաջանեան ոսկի աշտանակին է. Սարեկայ ծառը, Մովսէսի անապատում բարձրացրած օձը, սրբութեան սեղան, աթու տէրունեան, արքայութեան բանալին, անապատի մէջ խրայելացոց առաջնորդող լուսոյ ամօքը ելն. ելն.

Մի անգամ որ բանաստեղծն այսպէս կաշկանդուած է միջնադարեան օքոլաստիկական մեկնութեամբ, նա այլ ևս չէր կարող աղաս մտածողութիւն ու թափչը ունենալ, նոր ինքնուրոյն դաղափարներ զնել իր երգի մէջ. անհրամեշտօրէն պէտք է զկացմունքի ջերմութեանը փոխանակէր ցամաք ու սառն զատողութիւնը նա իրնիւթը մշակում է մեքենայաբար. չի կարողանում մեկնաբանների ընդունած պատկերների շրջանակից դուրս գալ և իր համար նոյն իսկ արտայայտութեան նոր, կենդանի զգացած ձեւը ստեղծել Նրա գործածած նմանութիւններն ու փոխարերութիւնները շինծու են, մութ ու անբնական եւ այս ամենի հետեւանքն այն է լինում, որ մեկնաբանական շարականների մեծ մասը բանաստեղծական ոչ մի արժէք չունին. դրանք խաչի զրոյցների կցկտուր պատմուածքներ են երգի ձևով:

Սակայն ինչքան էլ բանաստեղծների ճաշակը փշացած է սքուաստիկական մեկնաբանութիւնից, դարձեալ խաչի երգերի մէջ կան մի քանի այնպիսինները, որոնք դեղնցիկ են իրենց խրախուսական աշխատժով, խաչի հաւաքը շատ ջերմ է, և բանաստեղծի սրաից խակական ողեսրութեան խօսքեր են թուզում առ խաչը,

որոնք իրենց քնարականութեամբ յափշտակում են նոյն խալ ընթերցողին.

Զօրութիւն սուրբ խաչի քո, Քրիստոս!

Որ կանգնեցիր ի գրկութիւն աշխարհի,

Սա՞ պահեսցէ զմեղ յամենայն փորձութենէ: (եր. 488):

* * *

Դաւանաբանութիւնն և մանաւանդ մեկնաբանութիւնն առանձնապէս ազգել են նաև ո. Աստուածածնի երգերի վրայ, որոնք մեծ տեղ են բանում մեր Շարակնոցի մէջ: Նրան նուիրուած են իրեն աօների կանոններից զատ նաև Յարութեան օրհնութիւնների երրորդ աները և «մեծացուցչները», քանի որ կանոնների շարքի այս վերջին շարականները յօրինուած են իրեն կցուրդ Ս. Կոյսի յայտնի դովարանութեանը, որից և առնուած են կրկնակեները, երբեմն նոյն խալ երգերի խօսքերը. «Ուրախ լիր, բնրկրեալդ, Տէր ընդ քեզ», «Օրհնեալ ի կանայս», «Քենդ երանիցեն ազգը և ազինք ամենայն», «Օրհնեալ ես յաւիտեան»: Երգիչները սովորաբար «մեծացուցանում են» Աստուածածնին, երբեմն միայն բարերանում կամ օրհնաբանում, խնդրելով նրա բարեխօսութիւնը: Այստեղ ես զրիթէ բոլոր պատկերներն ու նմանութիւններն առնուած են մեկնաբաններից: Սուրբ Կոյսն է՝ երկին վեհագոյն, քերովք հողեղին, սիւն հրեղին, լուսոյն աշտարակ, սափոր ոսկի երկնային հացին, ամպ թեթե, գեղին իմանալի: «Զքեզ, երկնային դուռն, զոր ետևոն Եզեկիէլ, և տարն, զոր ծանեաւ Գեղէօն, սերովք հողեղին վեհագոյն քերովքից, օրհնութեամբ զքեզ, Աստուածածին, մեծացուցանները» (եր. 63): Ուրիշ երգերի մէջ նա է՝ խորան լուսոյ, անապական տաճար, մարենի անկիզիէլի ելն ելն: Քոլորը մեկնաբանների յօրինած բացատրութիւններ և ոչ թէ բանաստեղծների երեսեկայութեան արդիւնք: Դրանց մէջ առանձին տեղ է քանում լուսոյ պատկերը:

Քրիստոնէութեան առաջին չորս դարերում Պարսից արեգակի և լուսոյ աստուած Միթրայի կրօնը, որ չնորհիւ իր զրաւիչ միտտերիանների տարածուած էր և հոռմէական լայնածաւալ՝ կայսրութեան մէջ, աղդում է քրիստոնէական դաւանանքի կազմակերպութեան վրայ: Նիկիական հաւատոյ հանգանակի մէջ Քրիստոս կոչւում է ալլատուած յԱստուածոյ, լոյս ի լուսոյ: Քրիստոնեանները, լուսոյ պաշտամունքի աղդեցութեամբ, աղօթքի ժամանակ երեսները դարձնում էին զեպի արեկը (աղօթքաբանն), լուսոյ մեստիկական աշխարհը, որտեղից ծագում է արեգակը, որի հետ նոյնանում է Քրիստոս՝ ար-

Դարութեան արեւակը: Նոյն ձեռվ արեմաւաքք սիմբոլաբար համար-
ւում է խաւարի, ուրեմն և սատանայի բնակարան: Մկրտութեան ժա-
մանակ մկրտուողն ամենից առաջ պէտք է երեսը դէպի արեմուաք
դարձրած հրաժարուէր խաւարի իշխանից, հեթանոսութիւնից (Հրա-
ժարիմը ի սատանայէ). ապա դառնալով զէպի արենելք, նա խօստա-
նում էր Քրիստոսի, արդարութեան արեգակի, ծառայ դառնալ:
Եւ այսպիսով լոյս, արեգակ, տիւ, կեանք, հուր, արքայութիւն և
անապականութիւն, ցնծութիւն և հակառակը՝ դժոխք, մէզ ու
զիշեր, տրամութիւն (եր. 392), խաւար, մահ ու ապականութիւն
առանձին տեղ են բռնում քրիստոնէական հաւաքի մէջ: Նորոգ-
ւում է քրիստոնէական հաւատալիքի մէջ լուսոյ և խաւարի հին
կոփւր սիմբոլաբար իբր' իմանալի, դիտութեան լուսոյ և անզի-
տութեան խաւարի կոփւր ձշմարիտ, անհասանելի, անմատոյց, ան-
առունը կամ իմաստութեան լոյսն իբրև աստուածային, քրիստո-
նէական, խել խաւարն իբրև սատանայի, հեթանոսական անդի-
տութեան կամ կրապաշտութեան խաւար:

Հոգիոր երգը. լինելով արտայայտութիւն և կեղեցու ընդու-
նած զաւանութեան, այսանց ևս իւր մէջ անդրադարձնում է
իմանալի լուսոյ այս պաշտամունքը, մեր շարականների մո-
տիւնների մի մեծ մասը, առանձնապէս Աստուածածնի, մասամբ և
աէրունական շարականների, կազմուած են այս լուսոյ հաւատալիքի
վրայ: Անշառչու այս ամենը հեթանոսական ազգեցութեան տակ է
ծագած, բայց առանձնապէս հայկական չլ. ինչպէս կարծել են ումանք.
մեր հոգիոր երգերի այս կոփմը մետայն թերիս նրա համար աւելի զար-
դացած է, որ աւելի համապատասխան է եղել մեր հին հաւատալիք-
ներին. ինչպէս որ նոյնը գանում ենք մեր արդի ժողովրդական
հաւարի մէջ եւ Դա կազմում է քրիստոնէական զաւանարա-
նութեան մի մասը, որ կեղեցիկ արտայայտուած ենք զանում
Ա. Երրարդութեանը նուիրուած մի դաւանարանական շարականի,
«արեագալի» երգի մէջ, որ առւում է այն ժամանակ, երբ ծագու-
է առուօսեան լոյսը: Երդիշը հոգւով վնրանալով լուսոյ միսակ-
կական աշխարհը և պիմելով լուսոյ Արարտին՝ խնդրում է, որ իր
հոգու մէջ ծագէ իմանալի լոյսը.

Աւյս արարիչ լուսոյ առաջն լոյս,
Բնակեալի ի լոյս անմատոյց հայր երինաւոր,
Ի դառոց լուսեղինացն օրնիւալ
Ե ծագել լուսոյ առաօսուն
Մազկան ի հոգիս մեր զոյս բռ իմանալի (եր. 396):

Հստ այսմ Քրիստոս է զլոյս ի լուսոյ ծաղումն, արեգակն

արդար», իմանալի լոյս, արիմական լոյս (եր. 455), աղբիւր լուսոյ և ճառագայթ անշիջանելի լոյս (եր. 246). Նա է «արկողն զլոյս որպէս զօթոց» (250, 258, 274, 276). Նա իր ծննդով իրքի արեգակն ծագում է հերքելու անզիտութեան խաւարը և լուսաւորելու ու կեանք տալու արարածներին.

Ի չօրէ՛ ծագեցար

Լուսաւորել զարարածս,
Արդարութեան արեգակն.

Տէր, փառը քեզ:

Որ ի Հօրէ լուսոյ

Լոր ծագեցար մեզ եւ կեանք*** (եր. 24, 27, 70 և լն.)։

Քրիստոս է «իշխան մահու և կենաց», Նրա ամենազօր հրամանից դոզում է մահը, դժոխքը սարսափում ու պարտում է, ապականութիւնը լուծում, և խափանուում մահու իշխանութիւնը։ Այսովէս առանձնապէս Ղազարու յարութեան կանոնի և Յարութեան օրհնութիւնների մէջ, Քրիստոս ոչ միայն լոյս և կեանք է, այլ և նա է «հուրն Աստուած» (եր. 51), որ իր աստուածային կրակը տարածում է առասսարակ բոլոր տիեզերքը, քարկութեամբ գոռարով իջնում է սի ստորին կողմէն երկրից, զժոխքը, այդ մահու խաւարին բանոր, և այրում է Նրա դաները։ Նա ինչպէս մի պատերազմող յաղթական թագաւոր իւր հզօր կարողութեամբ քաջութեամբ կուռում է բռնակալ վիշապի հետ, ջարդում է նրա վլուխը և կամ կապում, զերում է այդ հզօրին, հրդեհնելով ու աւերելով Նրա ամրութիւնները և այնուզ փակուածներին ու կապուածներին արձակում և աղատութիւն է շնորհում (եր. 51, 56, 67, 131, 272, 278, 329, 706, 707, 711, 716 և լն.)։ Դա հին արեգակի և վիշապի, լուսոյ և խաւարի կորում է, որ իմանալի կերպով փոխազրուած է քրիստոնէութեան մէջ։

Մի անգամ որ Քրիստոս ներկայանում է իրքի լոյս և արեգակ, բնականարար Ա. Կոյսն առ զովարանում է իրքի մայր լուսոյ,

Այսօր աստեղը եւ լուսն

Ծնդ արեւու հրանուելով՝

Գովին պլոյն ի նօրէ,

Յաւոր ծննդնան լուսոյ մօրն (եր. 5, 25, 39 և լն.)։

Նրա պատերը սակայն աւելի թանձրանում է, և նա զառնում է իսկապէս լոյս, երկին վեհագոյն, լուսաւոր երկնակամար, տաճար լուսոյ, «ասաւոս խաղաղութեան և արուսեակ գուարթար» (28, 59, 143, 149 և լն.), պայծառ երկինք և ամազ լուսեղէն։

արեելք, որից ինչպէս մի արշալոյսից ծագում է արեգակը և լուսաւում:

Կորանայարկ, կամարանման
Յօրինեցար սուրբ կոյս Աստուածածին...
Աստուածածին, խորան լուսոյ
Անվարափակ արփւոյն կենաց,
Որ եղեր արհիելը
Արեգականն արդարութեան... (եր. 17. 28. 36. 61. 469.
266 եւ ին).

Աստուածածինը համեմատուելով ամսի հետ՝ ընականաբար իր մէջ ընդունում է հին հաւատալիքների ուրիշ կողմնոր ևս. «Ամպ ժեթե և լուսաւոր, որ զանձրելն կենաց ի քեզ հեղեալ ի յերկնային ծովն, հոսեցեր ի յերկիր ծարաւուա» (եր. 49. 213. 367. 473 և այլն): Պատկերները երբեմն առնւում են ծառ ու ծաղկից՝ «աստուածատունի իննկարեր ծառ յանուշանոտ բուրաստանէն», որ ի զնացս հոգւոյն վասկաց տնկեցար և զանմահնութեան պառզն ի ժամու հառուր մեղ» (եր. 162).

Ո՞վ գերահրաշ ծաղիկ, բուրեալ յեղեմայ,
Հոտ անմահութեան ծննդոց Եւայի... (եր. 58).

Ի՞շքն Աստուածածինը պատկերացւում է անձամբ իրեն մի մարդարափայլ, ծիրանազգեաց բերկեալ սուրբ կոյս, քան զերկինս բարձրադոյն և քան զարեգակն պայծառագոյն, ամբողջ լոյս, որի չուրջը փարում է համատարած լոյսը, որ վրան հազած ունի արեգակը «և ընդ ոտիւք լուսին ստուերատեսակ» (եր. 11. 29. 66. 213. 470 ելն), և որին աղջք և աղինք անդադար երգով մեծացուցանում են.

Զքեզ, ամենօրհնեալ Աստուածածին,
Մայրդ լուսոյ և առաջասա Աստուծոյ բանին,
Մեծացուցաննեմք:

Զքեզ, պայծառ երկինք և ամպ լուսեղէն,
Ծնող արարչին և մորինի անկիզելի,
Մեծացուցաննեմք:

Մ. Աքեղեան.